

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1**

2012 թ. փետրվարի 25-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 27 -ը:

Օրակարգ`

1. ԳՊՀ 2010-2011 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:
/ զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան /
2. ԳՊՀ ընթացակարգերի քննարկում և հաստատում:
/ զեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Ա. Կուսուզյան /

Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ 2010-2011 ուստարվա գործունեության հաշվետվությամբ և զարգացման հիմնական ուղղությունների ներկայացմամբ հանդես եկավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Զեկուցողը մանրամասնորեն անդրադարձավ հաշվետու ժամանակաշրջանում ունեցած ձեռքբերումներին: Կատարվել է հետևողական աշխատանք, մասնավորապես ընդունվել է 2011-2012 ուստարվա զարգացման և բարեփոխման հայեցակարգը, հակակոռուպցիոն ծրագիրը, ձեռնարկվել են կրթության որակի ապահովմանն ուղղված միջոցներ, ուսանողության շրջանում ձևավորվել են ինքնուրույն աշխատանքի հմտություններ: Բազմազան են եղել աշխատանքի կազմակերպման ձևերը. անցկացվել են ԳՊՀ կառավարման խորհրդի, գիտխորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետի խորհուրդների, ամբիոնների, մեթոդախորհրդումների նիստեր, խրախուսվել են դասախոսների մանկավարժական և գիտահետազոտական աշխատանքները, անցկացվել են գիտաժողովներ և այլն:

Կատարված աշխատանքների լավագույն գնահատականը ուսանողների դրական շարժն է: Ակտիվացել են ուսանողական գիտական ընկերության աշխատանքները, ամրապնդվել են ուսանող-դեկանատ, ուսանող-ամբիոններ կապերը: Կան հաղթողներ <<Բիզնես գրավչության իմ բանաձևը>>, <<Կտոր մը հայրենիք>>, <<Բարեպաշտ սերունդ>> հիմնադրամի և այլ հանրապետական մրցույթներում: Կարևոր դեր են

խաղում արտաքին կապերը, ակտիվացել է համագործակցությունը հայ և արտերկրյա բուհերի, գիտակրթական կառույցների հետ:

Համալսարանն ունի նաև այլ ձեռքբերումներ, մասնավորապես լիցենզավորվել են նոր մասնագիտություններ, բացվել է նոր համակարգչային լսարան, հիմնվել է ԳՊՀ պատմագիտական-հնագիտական թանգարան: Պարբերաբար կատարվել են համալսարանի վերանորոգումներ:

Ձեռքբերումների մեջ իրենց ավանդն ունեն ԳՊՀ բարերարները, <<Vivacell MTS>>, <<Orange Armenia>>, ընկերությունները, <<Ժիրայր Նիշանյան>> հիմնադրամը:

ԳՊՀ-ն իր աշխատանքները կազմակերպել է օրինականության, թափանցիկության և հակակոռուպցիոն սկզբունքներով:

ԳՊՀ ընթացակարգերը ներկայացրեց ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ մի շարք կարևոր ընթացիկ հարցերի: Մասնավորապես ուշադրություն հրավիրվեց հավատարմագրման և դրա հետ կապված գործընթացների վրա: Նշվեց, որ հավատարմագրման հայտը պետք է ներկայացնել ինքնավերլուծություն կատարելուց և զեկույց նախապատրաստելուց հետո:

Նիստն ավարտվեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի ամփոփիչ խոսքով:

Որոշեցին՝

1.ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԳՊՀ զարգացման հիմնական ուղղություններին:

3.Հաստատել <<ԳՊՀ ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման ուղեցույցը>>:

4.Հաստատել <<Շահակիցների պահանջների հաշվառմամբ ուսումնառության ակնկալվող արդյունքների վերաբերյալ ընթացակարգը>>:

5.Հաստատել <<ԳՊՀ կողմից առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման /բենչմարկինգի / ընթացակարգը:

6. Հաստատել «ԳՊՀ-ում ուսանողների հեռացման /ազատման/ և վերականգնման կարգը»:

7. Ուժը կորցրած համարել ԳՊՀ գիտխորհրդի 2010թ. փետրվարի 27-ի նիստում հաստատված «ԳՊՀ ուսանողներին ակադեմիական արձակուրդի տրամադրման, ազատման, հեռացման, վերականգնման կարգը»:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2**

2012 թ. մարտի 31-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 26-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2011-2012 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության ներկայացում:

/ զեկ՝ ԲՖ դեկանի ժ/պ Վ. Կատվայան /

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2011-2012 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության ներկայացում:

/ զեկ՝ ԲՆՖ դեկանի ժ/պ Մ. Ավագյան /

3.ԳՊՀ ընթացակարգերի քննարկում և հաստատում:

/ զեկ՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան /

4.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2011-2012 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ Վ.Կատվայանը: Վերջինս հանգամանորեն ներկայացրեց ֆակուլտետում իրականացրած բազմաբնույթ աշխատանքները: Զեկուցողն առավել մանրամասն անդրադարձավ կիսամյակային ստուգաքննների և քննությունների ընթացքին և արդյունքներին՝ վկայակոչելով համապատասխան թվեր ու փաստեր: Զեկուցման ընթացքում ուշադրություն դարձվեց նաև բացթողումների վրա, որոնք հետագայում պետք է վերացվեն:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ԲՆՖ դեկանի ժ/պ Մ.Ավագյանը: Նա կատարված աշխատանքները ներկայացրեց հետևյալ հաջորդականությամբ. ընդունելություն և ուսանողական համակազմ, ուսանողների փոխադրվելը և ուսումնական առաջադիմություն, կրթական ծրագրերի զարգացում և փոփոխություններ, ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացներ, ուսումնական ռեսուրսներ և օժանդակ ծառայություններ և այլն:

ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանը գիտխորհրդի քննարկմանը և հաստատման ներկայացրեց ԳՊՀ ընթացակարգեր:

Որոշեցին՝

1.ԲՖ դեկանի ժ/պ Վ.Կատվայանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.ԲՆՖ դեկանի ժ/պ Մ.Ավագյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3.Հաստատել <<ԳՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը>>:

4. Հաստատել «Մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների կատարման կանոնակարգը»:

5. Հաստատել «ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման և խրախուսման կանոնակարգը /փոփոխություններով/»:

6. Հաստատել «ԳՊՀ առկա ուսուցման համակարգում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգը /փոփոխություններով/»:

7. Հաստատել «ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության մշակման և իրականացման, կրթության որակի ներքին ապահովման ընթացակարգը /փոփոխություններով />»:

8. Ուժը կորցրած համարել ԳՊՀ գիտխորհրդի 27.02.2010թ նիստում հաստատված «ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության մշակման և իրականացման, կրթության ծրագրի որակի ներքին ապահովման ընթացակարգը»:

9. Ուժը կորցրած համարել ԳՊՀ գիտխորհրդի 28.06.2010 թ. նիստում հաստատված «ԳՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգը»:

10. Ուժը կորցրած համարել ԳՊՀ գիտխորհրդի 2008թ. նոյեմբերի 28-ի թիվ 3 նիստում հաստատված «ԳՊՀ շրջանավարտների ավարտական որակավորման կանոնակարգը»:

11. Ուժը կորցրած համարել ԳՊՀ գիտխորհրդի 05.03.2007թ նիստում հաստատված «ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը»:

12. Ուժը կորցրած համարել ԳՊՀ գիտխորհրդի 2008թ. նոյեմբերի 28-ի թիվ 3 նիստում հաստատված «Բակալավրի կրթական աստիճանով ավարտական աշխատանքի /բակալավրի թեզերի/, կուրսային աշխատանքների կատարման կանոնակարգը»:

13. Տպագրության երաշխավորել Ս.Խաչատրյանի « Հաճախապատում ճառքը» որպես հայկական զրադաշտական/և քրիստոնեական/ իրավունքի ճանաչման աղբյուր» աշխատությունը:

Գիտխորհրդի նախագահ՝
Գիտքարտուղար

Ռ. Խ. Հակոբյան
Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3**

2012թ. ապրիլի 11-ին տեղի ունեցավ գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Գիտխորհրդի 35 անդամներից նիստին մասնակցում էին 27-ը:

Օրակարգ`

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2011-2012 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության ներկայացում:

/ զեկ` դեկան Հ. Ղաջոյան /

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2011-2012 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության ներկայացում:

/ զեկ` դեկան Ս.Ամիրխանյան /

3.Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյանը: Խոսելով ընդհանրապես կրթական գործի, ուսուցման հարցերի մասին` նա կարևորեց կրթության որակի բարելավման խնդիրը: Մյուս խնդիրը դիմորդ-ընդունելության քննություններ-բուհ ուղղակի կապի բացակայությունն է: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի առաջադիմությունը և ընդհանուր առմամբ, և ըստ բաժինների ու կուրսերի: Կարևոր համարվեց նաև շրջանավարտների` աշխատանքի տեղավորման հանգամանքը:

Տնտեսագիտական ֆակուլտետի գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի դեկան Ս. Ամիրխանյանը: Զեկուցողը նախ մի քանի դիտարկումներ արեց` կապված շուկայական հարաբերությունների, առաջարկի և պահանջի համամասնության վերաբերյալ, ապա մանրամասնորեն ներկայացրեց ֆակուլտետի ծավալած գործունեությունը ուստարվա 1-ին կիսամյակում: Հաջորդաբար ներկայացվեցին ուսանողների առաջադիմության, ուսանողների շարժի, արտաքին ու

ներքին շահառուների կողմից բարձրացված հարցերի հետ կապված թվերն ու փաստերը:

Ընթացիկ հարցերը վերաբերում էին ԳՊՀ ներքին խնդիրներին: Մասնավորապես ուշադրություն հրավիրվեց դեկանների, ամբիոնների վարիչների սպասվելիք ընտրությունների պատշաճ կազմակերպման ու անցկացման խնդիրների վրա :

Որոշեցին՝

1.ԳՊՀ ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.ԳՊՀ ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3.Պատշաճ կերպով նախապատրաստվել դեկանների, ամբիոնների վարիչների ընտրություններին՝ սահմանված կարգով հայտարարելով մրցույթ:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4**

2012թ. ապրիլի 28-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտ-
խորհրդի նիստ: Նիստին գիտխորհրդի 35 անդամներից ներկա էին 24-ը:

Օրակարգ՝

- 1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ղեկանի ընտրություն:
- 2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ղեկանի ընտրություն:
- 3.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ղեկանի ընտրություն:
- 4.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ղեկանի ընտրություն:
- 5.ԳՊՀ կանոնակարգերի հաստատում:
- 6.Ընթացիկ հարցեր:

Նիստը ներածական խոսքով բացեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա կարևորեց
ղեկանների դերը համալսարանում կազմակերպչական, ուսումնական, մեթոդական,
գիտահետազոտական, դաստիարակչական աշխատանքները արդյունավետ
անցկացնելու առումով: Այս տեսակետից կարևոր է, որ ղեկանի պաշտոնում ընտրվող
անձը օժտված լինի մարդկային, բարոյական, մասնագիտական բարձր
հատկանիշներով, կազմակերպչական ունակություններով:

Այնուհետև օրակարգով նախատեսված հերթականությամբ հանդես եկան
բանասիրական ֆակուլտետի ղեկանի Ժ/պ Վ.Կատվայանը, բնագիտական ֆակուլտետի
ղեկանի Ժ/պ Մ.Ավագյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ղեկանի
Ժ/պ Հ.Ղաջոյանը և տնտեսագիտական ֆակուլտետի ղեկանի Ժ/պ Ս.Ամիրխանյանը,
որոնք ներկայացրին համապատասխան ֆակուլտետների 2012-2017 թթ. զարգացման
հայեցակարգերը:

ԳՊՀ կանոնակարգերն ու ընթացիկ հարցերը ներկայացրեց ԳՊՀ պրոռեկտոր
Ն.Կուտուզյանը:

Կանոնակարգի համաձայն ընտրվեց հաշվիչ հանձնաժողով և անցկացվեց փակ
/զաղտնի/ քվեարկություն /նախագահ՝ Հ. Զաքոյան, անդամներ՝ Մ. Հերզնյան, Պ.
Քոչարյան/: Գիտխորհրդի 35 անդամներից քվեարկությանը մասնակցեցին 24-ը: Քվե-
արկության արդյունքները ներկայացրեց Հ.Զաքոյանը:

- Վ.Կատվայան – կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0
- Մ.Ավագյան - կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0
- Հ.Ղաջոյան - կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0
- Ս.Ամիրխանյան – կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝
Որոշեցին՝

1. Հաստատել Վ.Կատվայանի՝ բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

2. Հաստատել Մ.Ավագյանի՝ բնագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

3. Հաստատել Հ.Ղաջոյանի՝ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

4. Հաստատել Ս.Ամիրխանյանի՝ տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

5. Ուժը կորցրած համարել ԳՊՀ գիտխորհրդի 27.02.2010 թ. նիստում ընդունված «ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի գործունեության կանոնակարգը»:

6. Ուժը կորցրած համարել ԳՊՀ գիտխորհրդի 17.04.2009թ. նիստում ընդունված «ԳՊՀ դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը»:

7. Ուժը կորցրած համարել ԳՊՀ 09.03.2007 թ. նիստում ընդունված «ԳՊՀ ուսանողներին ակադեմիական արձակուրդի տրամադրման կարգը»:

8. Ուժը կորցրած համարել ԳՊՀ 11.11.2007 թ. նիստում ընդունված «ԳՊՀ-ում դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման կարգը»:

9. Հաստատել «ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի գործունեության կանոնակարգը /փոփոխություններով/»:

10. Հաստատել «ԳՊՀ դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգը /փոփոխություններով />»:

11. Հաստատել «ԳՊՀ ուսանողներին ակադեմիական արձակուրդի տրամադրման կարգը /փոփոխություններով/»:

12. Հաստատել ԳՊՀ հանրության հետ կապերի /PR/ ապահովման քաղաքականության հիմնական ուղղություններն ու իրականացման ընթացակարգերը»:

13. Հաստատել «ԳՊՀ-ում դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման կարգը / փոփոխություններով />»:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5**

2012թ. մայիսի 30-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտ-
խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 24-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ընդհանուր գրականության ամբիոնի վարիչի
ընտրություն:

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտու-
թյունների ամբիոնի վարիչի ընտրություն:

3.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի
վարիչի ընտրություն:

4.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ձեռնարկությունների տնտեսագիտության և
կառավարման ամբիոնի վարիչի ընտրություն:

5.Ընթացիկ հարցեր:

Նիստը ներածական խոսքով բացեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը: Համառոտ
ներկայացնելով Գավառի պետական համալսարանի անցած ուղին՝ տիկին Հակոբյանը
շնորհավորեց գիտխորհրդի անդամներին՝ ուսանողների 15-րդ սերնդին կյանք
ճանապարհելու և մագիստրատուրայում 5-րդ սերունդն ընդունելու համար: Այնուհետև
ըստ օրակարգի նշված հերթականության՝ հանդես եկան ԳՊՀ բանասիրական
ֆակուլտետի ընդհանուր գրականության ամբիոնի վարիչի թեկնածու բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Գրիգորյանը, բնագիտական ֆակուլտետի ֆիզի-
կամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնի վարիչի թեկնածու
քիմիական գիտությունների թեկնածու Ֆ.Ավետիսյանը, հումանիտար
մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի վարիչի թեկնածու պատ-
մական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Հարությունյանը, տնտեսագիտական ֆա-
կուլտետի ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչի
թեկնածու տնտեսագիտության թեկնածու Հ.Զաքոյանը:

Նշված պաշտոնների թեկնածուներն անդրադարձան իրենց ամբիոնների աշխատանք-
ների առանձնահատկություններին, դրանց դրվածքին ու կատարման ընթացքին, իսկ
այնուհետև մանրամասնորեն ներկայացրին 2012-2017 թթ զարգացման հայեցակարգերը:
Դրանք ներառում էին աշխատանքային այնպիսի ուղղություններ ու կապեր, որոնք
համահունչ էին նշված ժամանակահատվածին և զարգացման միտումներին:
Ամբիոնների աշխատանքը պետք է արագորեն արձագանքի արտաքին միջավայրի
փոփոխություններին, լինի դինամիկ ու ճկուն, անընդհատ թարմացվեն ուսպլաններն ու
ծրագրերը, պրոֆեսորադասախոսական կազմը համալրվի նոր ու հեռանկարային
կադրերով, սերտ համագործակցություն ստեղծվի ինչպես համալսարանի մյուս
ստորաբաժանումների, այնպես էլ տարբեր գիտական, ուսումնական և հասարակական

կազմակերպությունների հետ: Կարևորվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և ուսանողներին դրանք հասու դարձնելու հարցերը:

Թեկնածուների և նրանց ներկայացրած հայեցակարգերի վերաբերյալ ելույթ ունեցան Ս.Ամիրխանյանը, Հ.Ղաջոյանը, Վ.Կատվայանը:

Կանոնադրության համաձայն՝ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով / նախագահ՝ Հ.Ղաջոյան, անդամներ՝ Ա.Ապրոյան, Մ.Բադայան / և անցկացվեց փակ /գաղտնի/ քվեարկություն, որին մասնակցեցին գիտխորհրդի 24 անդամներ: Բաժանվել էր 24 քվեաթերթիկ: Քվեարկության արդյունքներն ամփոփեց Հ.Ղաջոյանը.

Վ.Գրիգորյան – կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0
Ֆ.Ավետիսյան – կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0
Հ.Հարությունյան – կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0
Հ.Զաքոյան – կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝

Որոշեցին՝

1.Հաստատել Վ.Գրիգորյանի՝ ընդհանուր գրականության ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

2.Հաստատել Ֆ.Ավետիսյանի՝ ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

3.Հաստատել Հ.Հարությունյանի՝ պատմության ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

4.Հաստատել Հ. Զաքոյանի՝ ձեռնարկությունների տնտեսագիտության նկատվարման ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

Գիտխորհրդի նախագահ՝
Գիտքարտուղար՝

Ռ. Խ. Հակոբյան
Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6**

2012 թ. հունիսի 22-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտ-
խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչի ընտրություն:
2. ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ընտրություն:
3. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելա-
կերպի ամբիոնի վարիչի ընտրություն:
4. ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտու-
թյունների ամբիոնի վարիչի ընտրություն:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստը ներածական խոսքով բացեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը: Խոսելով համալսարանի զարգացման հեռանկարների մասին՝ տիկին Հակոբյանը կարևորեց նորագույն տեխնիկայի ներդրման անհրաժեշտությունը ուսուցման գործընթացում: Այս տեսակետից իսկապես իրադարձություն էր նոր համակարգչային լսարանի ստեղծումը, որում իր մեծ ավանդն ունեն «Վիվասել ՄՏՍ» ընկերությունը, նրա տնօ-
րեն Ռալֆ Յիրիկյանը: Առաջարկվեց նրան շնորհել ԳՊՀ պատվավոր դոկտորի կոչում: Այնուհետև տիկին Հակոբյանը, բարձր գնահատելով Թամարա Ալեքսանյանի գիտամանկավարժական գործունեությունը ԳՊՀ-ում, առաջարկեց նրան հանձնել ԳՊՀ շնորհակալագիր:

Զեկուցումով հանդես եկավ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահա-
կան հաշվառում» ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածու, նույն ամբիոնի վարիչի Ժ/պ
Հ. Ղուլոյանը: Զեկուցողը գիտխորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց այն
խնդիրների վրա, որոնց իրականացումը միտում ունեւ բարելավելու ամբիոնի
աշխատանքները: Ուսանողների որակական զարգացում, ուսալանների և
առարկայական ծրագրերի թարմացում ու արդիականացում, դասավանդման

մեթոդների կատարելագործում, արտադրական և ուսումնական պրակտիկաների կազմակերպում, վերապատրաստումներ, գիտահետազոտական աշխատանքների ծավալում, մասնակցություն տարբեր ծրագրերի, մանավանդ դրամաշնորհային. ահա աշխատանքների այն հիմնական ուղղությունները, որոնք, ըստ թեկնածուի, պետք է իրականացնել ամբիոնում:

Այնուհետև իր նկատառումները ներկայացրեց ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածու, այդ ամբիոնի վարիչի ժ/պ Ա.Մուխսիխաչոյանը: Վերջինս կարևորեց կադրային, ձեռնարկների ստեղծման, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, փոխադարձ դասալսումների, համագործակցության ընդլայնման, բարոյահոգեբանական առողջ ու աշխատանքային մթնոլորտի ապահովման և նման այլ հարցեր:

Իրենց ծրագրերն ու անելիքները ներկայացրին կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածու Ա.Սիմոնյանը, հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածու Լ.Քյուրքչյանը: Նրանք ևս շահագրգռություն հանդես բերեցին ամբիոնների աշխատանքների աշխուժացման, նպատակասլաց դարձնելու ուղղությամբ:

Ելույթ ունեցան Մ.Ավագյանը, Հ.Ղաջոյանը, Ն.Կուսուզյանը: Հարցեր ուղղվեցին թեկնածուներին:

Համաձայն կանոնադրության՝ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով /նախագահ՝ Հ.Ղաջոյան, անդամներ՝ Հ.Զաքոյան, Ա.Ապրոյան / և անցկացվեց փակ /գաղտնի / քվեարկություն: Քվեարկությանը մասնակցել է գիտխորհրդի 27 անդամ: Քվեաթերթիկների հաշվարկից հետո Հ.Ղաջոյանը ներկայացրեց արդյունքները.

Հ. Ղուլոյան – կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0

Ա. Մուխսիխաչոյան – կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0

Ա. Սիմոնյան - կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0

Լ. Քյուրքչյան – կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Որոշեցին՝

1. Հաստատել Հ. Ղուկոյանի՝ հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

2. Հաստատել Ա. Մուխսիխաչոյանի՝ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

3. Հաստատել Ա. Սիմոնյանի՝ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

4. Հաստատել Լ. Քյուրքյանի՝ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7**

2012թ. օգոստոսի 25-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտ-
խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 24-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և հաշվիչ տեխնիկայի ամբիոնի
վարիչի ընտրություն:

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի վարիչի
ընտրություն:

3.Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը: Հակիրճ ներածականից հետո նա խոսք
տվեց ԲՆՖ ինֆորմատիկայի և հաշվիչ տեխնիկայի ամբիոնի վարիչի ժ/պ Հ.Մելիքյանին,
որի թեկնածությունն առաջադրված էր նույն ամբիոնի վարիչի պաշտոնի համար:
Հ.Մելիքյանը նշեց, որ ԻՀՏ ամբիոնի նպատակն է պատրաստել ճարտարագետներ <<Ին-
ֆորմատիկա և հաշվողական տեխնիկա>> մասնագիտության գծով: Նպատակն իրագոր-
ծելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գիտատեխնիկական անընդհատ
առաջընթացը: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ամբիոնի աշխատանքների
զարգացմանն ուղղված բարեփոխումների հիմնական ուղղությունները:

Այնուհետև խոսք տրվեց ԲՆՖ աշխարհագրության ամբիոնի վարիչի ժ/պ Բ.ՄՆացական-
յանին, որի թեկնածությունն էլ առաջադրված էր նույն ամբիոնի վարիչի պաշտոնի
համար: Նա ներկայացրեց աշխարհագրության ամբիոնի զարգացման հնգամյա հայեցա-
կարգը / կից ներկայացվում են հայեցակարգերը /:

Զեկուցողները պատասխանեցին գիտխորհրդի անդամների հարցերին:

ԳՊՀ ամբիոնի վարիչների ընտրության կանոնակարգին համաձայն՝ առաջարկվեց
անցկացնել փակ /զաղտնի / քվեարկություն:

Համաձայն կանոնադրության՝ քվեարկությունն անցկացնելու համար ընտրվեց հաշվիչ հանձնաժողով. նախագահ՝ Հ.Ղաջոյան, անդամներ՝ Գ. Աթեյան, Մ.Հերգնյան: Անցկացվեց փակ /գաղտնի / քվեարկություն, որին գիտխորհրդի 35 անդամներից մասնակցել է 24-ը:

Քվեարկության արդյունքները ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ.Ղաջոյանը.

Հ. Մելիքյան – կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0

Բ. Մնացականյան – կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր՝ 0

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝

Որոշեցին՝

1.Հաստատել Հ.Մելիքյանի՝ <<Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա>> ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

2.Հաստատել Բ. Մնացականյանի՝ աշխարհագրության ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար անցկացված քվեարկության արդյունքները:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8**

2012 թ. սեպտեմբերի 22-ին տեղի ունեցավ գավառի պետական համալսարանի գիտ-
խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 25-ը:

Օրակարգ`

1.ԳՊՀ միջազգային ծրագրերի արդյունքների ներկայացում:

/ զեկ` Մ. Բադայան /

2.ԳՊՀ միջազգային համագործակցության նոր ծրագրերի ներկայացում-
շնորհանդես:

/ զեկ` Ա.Ապրոյան /

3.Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ հանդես եկավ ԲՖ դեկանի տեղակալ Մ.Բադայանը, որը ներկայացրեց ԳՊՀ միջազգային համագործակցության ծրագրերի արդյունքները: Այդ ծրագրերը երկուսն են` ԷՐԱՍՄՈՒՍ ՄՈՒՆԴՈՒՍ և ՏԵՄՊՈՒՍ: Առաջինը աջակցում է բուհերին համատեղ ծրագրեր իրականացնել կամ համագործակցություն հաստատել Եվրոպայի և թիրախային երրորդ երկրների հաստատությունների հետ, ուսանողներին, հետազոտողներին կամ բուհերի դասախոսներին, որոնք ցանկանում են իրականացնել համատեղ ծրագրեր այլ բուհերում, բարձրագույն կրթության բնագավառում գործունեություն իրականացնող ցանկացած կազմակերպությանը, որը պատրաստ է ծրագրեր մշակել: Երկրորդն աջակցում է բարձրագույն կրթության բնագավառում կրթական, ուսումնական ծրագրերի վերանայմանն ու զարգացմանը, կրթօջախների արդիականացմանը և համալ-սարանական կառավարման համակարգի կատարելագործմանը: Այն ունի երեք հիմնական բաղադրիչ` կրթական ծրագրային բարեփոխումներ, բուհերի կառավարման համակարգի բարեփոխումներ, բարձրագույն կրթություն և հասարակություն կապի

ամրապնդմանն ուղղված գործողություններ: Մ. Բաղայանը մանրամասնորեն ներկայացրեց այդ ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքները:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ԳՊՀ պրոռեկտոր Ա.Ապրոյանը, որն անդրադարձավ նշված ծրագրերի շրջանակներում առկա նոր համագործակցություններին: Ձեկուցողը ներկայացրեց այդ ծրագրերով նախատեսված պայմաններին վերաբերող հարցերը՝ համակարգում, տևողություն, բյուջե, ԳՊՀ-ին հատկացված տեղեր և այլն: Ծրագրերին կարող է մասնակցել յուրաքանչյուր ուսանող, դասախոս, եթե նրանց տվյալները համապատասխանում են առաջադրվող պահանջներին: Ծրագրերն արդեն ընթացքի մեջ են:

Ընթացիկ հարցերի շարքում առավել կարևորվեց Գավառի պետական համասարանի բակում Հրանտ Խաչատուրի Հակոբյանի կիսանդրին կանգնեցնելու հարցը:

Ձեկուցողները պատասխանեցին գիտխորհրդի անդամների հարցերին: Նիստի աշխատանքներն ամփոփեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը:

Որոշեցին՝

- 1.Մ.Բաղայանի և Ա.Ապրոյանի զեկուցումներն ընդունել ի գիտություն:
2. Ուսանողների, դասախոսների շրջանում մասսայականացնել նշված ծրագրերը և շարունակել մասնակցությունը ԳՊՀ միջազգային համագործակցության նոր ծրագրերին:
- 3.Հաշվի առնելով Գավառի պետական համալսարանի հիմնադրման ու կայացման գործում ունեցած հսկայական ավանդը և ծննդյան 85-ամյա հոբելյանը՝ Գավառի պետական համալսարանի դիմաց կանգնեցնել փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի կիսանդրին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9**

2012թ. հոկտեմբերի 26-ին տեղի ունեցավ գավառի պետական համալսարանի գիտ-
խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 26-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2011-2012 ուստարվա գործունեության հաշվե-
տվության և 2012-2013 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ ԲՖ դեկան Վ.Լ.Կատվայան /

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2011-2012 ուստարվա գործունեության հաշվե-
տվության և 2012-2013 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ ԲՆՖ դեկան Մ.Պ.Ավագյան /

3.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2011-2012 ուստարվա գործունեության
հաշվետվության և 2012-2013 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ պրոռեկտոր Ն.Ա.Կուտուզյան /

4.Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը: Նա շնորհավորեց ԳՊՀ կենսաբանու-
թյան, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ, գիտության վաստակավոր
գործիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Արշալույսի Սի-
մոնյանին ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ, մաղթեց քաջառողջություն և
գիտամանկավարժական բեղմնավոր գործունեություն: ԳՊՀ ուսումնագիտական գծով
պրոռեկտոր Ն.Կուտուզյանը ներկայացրեց գիտնականի հարուստ կենսագրությունը
արժևորելով կենսաբանական գիտությունների բնագավառում ունեցած ներդրումը,
բարձր գնահատելով նրա մանկավարժական գործունեությունը ինչպես ընդհանրապես,
այնպես էլ Գավառի պետական համալսարանում: Առաջարկվեց Ա.Ա.Սիմոնյանին շնոր-
հել ԳՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում:

Ելույթ ունեցավ հոբելյարը և շնորհակալություն հայտնեց իր գործունեությունը
բարձր գնահատելու համար:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ԲՖ դեկան
Վ.Կատվայանը: Զեկուցողը ներկայացրեց 2011-2012 ուստարում ֆակուլտետում
կատարված աշխատանքների հաշվետվությունը, իսկ այնուհետև անդրադարձավ 2012-
2013 ուստարվա զարգացման հայեցակարգին / կից ներկայացվում է զեկուցումը /:

Բնագիտական ֆակուլտետում 2011-2012 ուստարում կատարված աշխատանքների հաշվետվությամբ հանդես եկավ ԲՆՖ դեկան Մ.Ավագյանը: Ջեկուցողն անդրադարձավ կազմակերպչական, ուսումնադաստիարակչական, ամբիոնների իրականացրած աշխատանքներին, կազմակերպված միջոցառումներին, քննադատաբար մոտեցավ թերություններին ու բացթողումներին: Այնուհետև Մ.Ավագյանը ներկայացրեց ֆակուլտետի 2012-2013 ուստարվա զարգացման հայեցակարգը, որը հիմնված էր 5-ամյա հայեցակարգի վրա և հաշվի էին առնվել նախորդ ուստարում եղած թերությունները /կից ներկայացվում է զեկուցումը /:

Հաշվետու ժամանակաշրջանում հերակա ուսուցման ֆակուլտետում կատարված աշխատանքները ներկայացրեց ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Ջեկուցողը կանգ առավ կազմակերպչական, ուսումնական այն առանձնահատուկ խնդիրների վրա, որոնք չեն դրսևորվում առկա ուսուցման համակարգում, սակայն հատուկ են հեռակա ուսուցմանը: Ֆակուլտետի համար 2012-2013 ուսումնական տարին առանձնահատուկ է նրանով, որ միաժամանակ ավարտում են և 5-րդ, և 6-րդ կուրսերը, 1-ին կուրսում ներդրվելու է գնահատման կրեդիտային համակարգը: Այս ուստարվա 1-ին կիսամյակի դասերը սկսվելու են 2013թ. հունվարի 8-ին /կից ներկայացվում է զեկուցումը/:

Օրակարգի ընթացիկ հարցերի մասին խոսեց Ն.Կուտուզյանը: Նա ներկայացրեց <<ԳՊՀ հեռակա ուսուցման համակարգում բակալավրի կրթական աստիճանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգը>> առաջարկելով այն քննարկել և հաստատել: Այնուհետև քննարկման ներկայացվեց Ա.Միմոնյան, Ի.Բատիկյան, Ա.Մարգարյան, Լ.Անտոնյան հեղինակային խմբի հեղինակած <<Դասախոսություններ կենսաբանության և էկոլոգիայի արդիական թեմաներով>> ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

Նիստի աշխատանքներն ամփոփեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը:

Որոշեցին՝

1.ԲՆՖ դեկան Վ.Կատվալյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3.ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳՊՀ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ Արմեն Արշալույսի Միմոնյանին շնորհել ԳՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում:

5. Հաստատել «ԳՊՀ հեռակա ուսուցման համակարգում բակալավրի կրթական աստիճանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգը»:

6. 2012-2013 ուստարում հեռակա ուսուցման համակարգում բոլոր մասնագիտությունների գծով առաջին կուրսեցիների ուսուցումը կազմակերպել կրեդիտային համակարգով:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10**

2012թ. նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 28-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ ՀՄՖ դեկան Հ.Գ.Ղաջոյան /

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ ՏՖ դեկան Ս.Գ.Ամիրխանյան /

3.Ընթացիկ հարցեր:

Մինչև օրակարգի հարցերին անցնելը ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը գիտխորհրդին ներկայացրեց բուհերի ռեկտորների խորհրդակցության ընթացքում քննարկված հարցերը, մասնավորապես ուշադրություն հրավիրեց մասնագիտությունների խոշորացման՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի դասակարգիչի, կրթության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի իրագործման հարցերի վրա: Նշված հարցերի մի մասը առայժմ քննարկման փուլում է: ԳՊՀ-ի հետ կապված՝ տիկին Հակոբյանը կարևորեց վարձավճարների գանձման հարցը: Մինչև հիմա համալսարանից հեռացվել են ուսման մեջ թերացողները, մինչդեռ ֆինանսական կարգապահության խախտման համար ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել, որի հետևանքները դժվարություններ են ստեղծում ԳՊՀ-ի համար: Անհրաժեշտություն կա կարգավորելու վարձավճարների գանձման հարցերը:

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2011-2013 ուստարվա գործունեության հաշվետվությամբ հանդես եկավ դեկան Հ.Ղաջոյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետում կատարված աշխատանքները, որոնք եղել են բազմազան ու բազմաբնույթ: Վերլուծելով ֆակուլտետի գործունեությունը՝ Հ.Ղաջոյանը անդրադարձավ նաև իրենց առաջ ծառայած մի շարք խնդիրների, որոնց լուծումը ժամանակ է պահանջում: Այնուհետև նա ներկայացրեց 2012-2013 ուստարվա զարգացման հայեցակարգը / կից ներկայացվում է զեկուցումը /:

Անցած ուսումնական տարվա գործունեությունը ներկայացրեց նաև ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանը: Վերջինս ֆակուլտետում տարված աշխատանքների արդյունքների վերլուծությունը կատարեց ըստ առանձին ոլորտների: Նոր ուստարում պետք է վերացվեն նկատված թերությունները: Ս.Ամիրխանյանը ևս ներկայացրեց 2012-2013 ուստարվա զարգացման հայեցակարգը /կից ներկայացվում է զեկուցումը /:

Համալսարանին վերաբերող ընթացիկ հարցերի մասին խոսեց ԳՊՀ պրոռեկտոր Ա.Ապրոյանը: Նա ինֆորմացիա տվեց այս ամսվա սկզբում Դոնեցկում Erasmus Tempus ծրագրի շրջանակներում կայացած հանդիպման մասին: Այս առումով նա կարևորեց ԳՊՀ մասնակցության հարցը: Պետք է ծրագրեր ներկայացնել, որոնք կֆինանսավորվեն:

Նիստի ավարտին ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը որոշ նկատառումներ արտահայտեց զեկուցումների, գնահատականների տրվող միավորների սանդղակի, լուծարքների վերաբերյալ: Լուծարքները պետք է կազմակերպել և անցկացնել հանձնաժողովներով:

Որոշեցին՝

1.ԳՊՀ ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.ԳՊՀ ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11**

2012 թ. նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 26-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ 2011-2012 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվության և 2012-2013 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ պրոռեկտոր՝ Ն. Ա. Կուտուզյան /

2.ԳՊՀ 2011-2012 ուստարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվության և 2012-2013 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ Ա.Հ.Ապրոյան /

3.Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Ա.Կուտուզյանը: Նա ասաց, որ 2011-2012 ուստարին ԳՊՀ-ում հայտարարված էր կրթության որակի ապահովման տարի: Դրա համար էլ ողջ ուսումնական տարվա ընթացքում կատարվել են տարաբնույթ աշխատանքներ՝ նպատակակետ ունենալով կրթական ծրագրերի իրականացման որակը:

Այնուհետև զեկուցողն անդրադարձավ 2011թ. ընդունելության քննություններին առկա, հեռակա և մագիստրոսական ուսուցման համակարգերում՝ բերելով համապատասխան թվային տվյալներ: Շարունակվել է բարձր առաջադիմություն ցուցաբերած 2011թ.շրջանավարտների ընդունելության գործընթացը ԳՊՀ-ի հետ պայմանագրեր ունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից: Ներկայացվեցին ուսանողների՝ 1-ին և 2-րդ կիսամյակների առաջադիմության ցուցանիշները նախորդ տարվա համեմատությամբ: Սահմանված կարգի համաձայն՝ 2012 է. Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացվեց գործատուների, համապատասխան ոլորտի մասնագետների, գիտական հիմնարկների մասնագետների մասնակցությամբ:

Ատեստավորման ողջ ընթացքը ձայնագրվեց, որն օգտագործվեց գնահատականների բողոքարկման ժամանակ: Կարևոր իրողություն էր գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգում փոփոխություններ կատարելը, որն արտացոլվեց համապատասխան <<Կարգ>>-ում: ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության և գիտության նախարարության նորմատիվ փաստաթղթերին, կրթության որակի ապահովման ազգային և միջազգային պահանջներին համապատասխան՝ ԳՊՀ կանոնակարգերում և ընթացակարգերում կատարվել են փոփոխություններ: Հաշվետու ժամանակաշրջանում գործարկվել են նոր կայքէջ և էլեկտրոնային համակարգ: Համալսարանը շարունակել է համագործակցությունը գիտական, ուսումնական, կրթական, մշակութային տարբեր կազմակերպությունների հետ:

Համալսարանում անցկացվել է ամենամյա՝ 14-րդ գիտաժողովը, որի նյութերը տպագրվեցին: Հրատարակվել են նաև ԳՊՀ դասախոսների հեղինակած ուսումնական, մեթոդական ածխատանքները: ԳՊՀ-ն մասնակցեց <<Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում կամ դրանց հետագա բարելավում>> դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթին և շահեց: Ն.Կուտուզյանը ներկայացրեց այն ոլորտները, որոնցում աշխատանքներ պետք է տարվեն դրամաշնորհային ծրագրով նախատեսված նպատակներին հասնելու համար: Զեկուցողը կարևորեց նաև ԳՊՀ դեկանների, ամբիոնի վարիչների ընտրությունների գործընթացը, որն ընթացավ ընթացակարգային բոլոր նորմերի պահպանմամբ:

Զեկուցման ավարտին Ն.Կուտուզյանը ներկայացրեց 2012-2013 ուստարվա ԳՊՀ ուսումնագիտական զարգացման հայեցակարգը: / կից ներկայացվում է զեկուցումը /

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր Ա.Հ.Ապրոյանը: Նա նշեց, որ համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը իրականացվել է նախատեսված գործողությունների ժամանակացույցին համապատասխան: Աշխատանքները կատարվել են տնտեսատեխնիկական բոլոր բաժինների աշխատակիցների ուժերով: Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի նյութատեխնիկական բազան հարստացել է համակարգիչներով, պահեստամասերով, տպիչներով, պատճենահանող սարքերով, կահույքով, գրենական պիտույքներով, մարզագույքով, կենցաղային տեխնիկայով: Կատարվել են վերանորոգման, ներքին հարդարման աշխատանքներ: Այնուհետև զեկուցողը մանրամասնորեն ներկայացնում է ինչպես կատարված, այնպես էլ կատարվելիք աշխատանքները: /կից ներկայացվում է զեկուցումը/

Զեկուցումների շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն: Քննարկվեց նաև Վ.Ռ.Գրիգորյանի <<Հրանտ Մաթևոսյան>> աշխատությունը տպագրության

երաշխավորելու հարցը, որի շուրջ էլույթ ունեցան Վ.Համբարձումյանը, Վ.Կատվայանը, Ն.Ղազարյանը: Նիստն ամփոփեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.հակոբյանը՝ գիտիտրիտի անդամների ուշադրությունը հրավիրելով նաև մի շարք կարևոր ընթացիկ հարցերի վրա:

Որոշեցին՝

1.ԳՊՀ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ն.Ա.Կուտուզյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.ԳՊՀ տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Հ.Ապրոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3.Վ.Ռ.Գրիգորյանի <<Հրանտ Մաթևոսյան. ստեղծագործությունը >> աշխատությունը երաշխավորել տպագրության:

Գիտժողովի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան